



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական
մտածողության զարգացումը «Պատմություն» առարկայի
ուսուցման գործընթացում*

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Բաղդասարյան

*Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի
Լճափ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Պատմության ուսուցման գործընթացում աշակերտների քննադատական մտքի զարգացման հոգեբանական-մանկավարժական և մեթոդաբանական հիմքերը.....	5
Պատմության դասավանդման գործընթացում աշակերտների քննադատական մտածողության զարգացմանն ուղղված միջոցներ.....	12
Եզրակացություն.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	19

Ներածություն

Քննադատական մտածողությունը ապացուցումների համակարգ է, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն:

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկության հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները: Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները: Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը:

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ, դիտողականություն: Այն կիրառում է տրամաբանությունը, ինչպես նաև հենվում է մետագիտելիքի և այնպիսի խորը ինտելեկտուալ ունակությունների վրա, ինչպիսիք են հստակությունը, ճշմարտացիությունը, արդարությունը, բովանդակությունը, լայն մտահորիզոնը:

Աշխատանքի մեջ ցանկացել եմ ընդգծել աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվել է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը: Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ: Նախևառաջ հետաքրքիր է այն հարցը, թե հնարավո՞ր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն

առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Աշխատանքի նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում: Առաջադրված վարկածն է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնառությունը կարճ է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը: Ուսուցչի խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության որոշակի փոխանցելի հմտություններ: Մանկավարժական գործունեության ընթացքում մանկավարժների ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացում:

Աշխատության խնդիրներն են.

- Գնահատել, թե որքանով է կրթությունը նպաստում քննադատական մտածողության զարգացմանը
- Հիմնավորել քննադատական մտածողության կարևորությունը, որպես որակի ապահովման հենասյունային բաղկացուցիչ:

Անհրաժեշտ է մշակել առաջարկություններ, որոնք կնպաստեն քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգի ձևավորմանը, որն իր հերթին կարող է գործիք հանդիսանալ ինքնության հիմքի վրա ծագող կոնֆլիկտների կանխման, կարգավորման և հաշտեցման համար:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ-
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Անհրաժեշտ է դասի ընթացքում, ի թիվս այլ հմտությունների աշակերտների մոտ զարգացնել վերլուծության հմտությունը, դասերի արդյունքում աշակերտները կկարողանան քննարկել, դասակարգել, տարբերակել, վերլուծել, պարզաբանել, հիմնավորել և այլն: Ուսումնառության արդյունքներին հասնելու տեսանկյունից շատ կարևոր է դասի պլան կազմելը: Նախքան դասարան մտնելը ուսուցիչը կազմում է սովյալ դասի պլանը, որտեղ իր համար հստակեցնում է, թե դասի ժամին որ մասն ինչին է հատկացնելու: Մովորաբար դասի մի հատված նվիրված է լինում հարց ու պատասխանին, որտեղ ուսուցիչը դասարանին է ուղղում հարցեր, որոնց միջոցով ակտիվացնում է աշակերտների մտածողությունը քննարկվող թեմայի շուրջ: Լավ մտածված և կազմված հարցերը կմղեն աշակերտներին ընդգրկվել քննադատաբար մտածելու գործողության մեջ: Առաջարկվող շրջանակային մոդելի երկրորդ փուլը ենթադրում է դասավանդում՝ հարցեր տալու միջոցով: Աշակերտներին հարցեր տալը հանդիսանում է դասավանդման և ուսումնառության կենսական կարևորություն ունեցող մասը: Հարցադրումներն օգնում են ուսուցչին ստուգել, թե որքանով են աշակերտները նյութը յուրացրել, հաստատել նրանց կողմից ձեռք բերված գիտելիքը և, որն ամենակարևորն է, քննարկումների միջոցով խթանել նոր մտքերի, հասկացությունների ձևավորումն ու զարգացումը: Ուսուցիչը կարող է հանդես գալ նոր մարտահրավերներ նետողի դերում, և այս պարագայում աշակերտը ստիպված է լինում հստակեցնել իր դիրքորոշումը և պաշտպանել այն: Հարցադրումներ կայացնելու տեխնիկան օգտագործվում է աշակերտի մտածելու կարողությունը զարգացնելու համար: Հարցադրումները կարող են լինել պարզ և կարող են լինել շատ բազմաբովանդակ: Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից կարևոր են քննարկումները որոնք նպաստում են քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը: Կարևոր է նաև նախքան գնահատելը աշակերտին տալ սովորածը կիրառելու հնարավորություն: Ժամանակակից կրթական համակարգում դասավանդումը պետք է իրականացվի ակտիվ ուսումնառության միջոցով:

Բռնուելն ու Էյիսոնը նշում են, որ ակտիվ ուսումնառությունն այն է, երբ աշակերտներն ընդգրկվում են այնպիսի գործողությունների մեջ, որը ստիպում է

նրանց մտածել սեփական քայլերի, գործողությունների, մտքերի մասին: Հետևաբար տրամաբանական է, որ աշակերտն առավել լավ է յուրացնում և երկար է պահում այն գիտլիքը, որի շուրջ իր տեսակետն ու կարծիքն է արտահայտել: Երբ մշակվում է առարկայական ծրագիրը, իդեալական կլիներ նախապես մտածել ակտիվ ուսումնառությունն ապահովող այն տեխնոլոգիաների մասին, որոնք հնարավորություն կտային աշակերտին ինքնուրույն հավաքել ինֆորմացիա և ձևավորել սեփական մտքերը, ինքնուրույն մոդելավորելու և դիտարկելու փորձ ձեռք բերել:

Առաջարկվող մոդելի մյուս փուլը ենթադրում է վերանայում, բարելավում և կատարելագործում: Ցանկացած առարկայական ծրագիր, որքան էլ լավ մտածված լինի, ունի որոշ թերություններ, որոնք երևան են գալիս դասավանդման ընթացքում: Դասընթացի բարելավման տեսանկյունից օգտակար կարող է լինել նաև հետադարձ կապի տրամադրումը և ուսումնառության գնահատումը: Իրականում, հետադարձ կապի ապահովման նպատակը աշակերտի ուսումնառության որակի բարելավումն է և ամենակարևորը, օգնում է աշակերտին հասկանալ, թե ինչպես կարող է ինքը ապագայում գնահատել իր գիտելիքը և այդ գիտելիքի դրսևորումը: Ուսումնառության գնահատումը նույնպես կարող է հանդիսանալ հետադարձ կապի տրամադրման ձև: Այս տեսանկյունից կարևոր է ուսուցչի դիտողություններն ու մեկնաբանությունները (հնարավոր է նաև գրավոր) աշակերտի ներկայացրած աշխատանքի վերաբերյալ: Այդ մեկնաբանությունները պետք է ունենան առավելապես ինֆորմատիվ, քան վերահսկիչ բնույթ, պետք է օգնեն աշակերտին հասկանալ իր թույլ կողմերը և ուղղություն ցույց տան թերացումները վերացնելու և բարելավելու նպատակով: Գնահատումը հնարավորություն է տալիս նաև հասկանալու, թե որքանով են ուսումնառության արդյունքները աշակերտի կողմից ձեռք բերվել: Այդ արդյունքի վերլուծությունը կօգնի նաև հասկանալ դասընթացի թույլ և ուժեղ կողմերը և բավարար ինֆորմացիա կտա հիմնավորելու բարելավման և կատարելագործման նպատակով ներկայացվող առաջարկությունները: Չնայած այն հանագամանքին, որ նման մտածողության զարգացումը ընդունված է համարել բարձրագույն կրթության հիմնական նպատակներից մեկը, ոչ միշտ են մասնագիտական կրթական ծրագրերը սպասարկող ուսումնական պլանները մշակվում՝ հիմքում ունենալով այդ նպատակին ծառայելու հրամայականը: Հասարակության արժեհամակարգի վերափոխման, վերաձևավորման համար

անհրաժեշտ է ինքնուրույն, քննադատաբար մտածող, լայն ընկալումով և փոփոխությունների պատրաստ անհատների անբողջություն: Այս իրողությունը հաստատվում և ընդունվում է արևմուտքի մի շարք գիտնականների կողմից: Քննադատական մտածողությունը այն մեկ ընդհանուր անվանումն է, որով կարելի է բնորոշել ինքնուրույն, անկախ, համակարգային և նորարական մտածողությունը: Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Անհրաժեշտ է ստեղծել հիմք ձևավորելու քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգ, որն իր հերթին կարող է գործիք հանդիսանալ ինքնության հիմքի վրա ծագող կոնֆլիկտների կանխման, կարգավորման և հաշտեցման համար: Վերոնշյալն ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ կրթությունը պետք է կարողանա վերափոխել և/կամ զարգացնել աշակերտի իմացական ընկալումը (cognitive understanding): Աշակերտի իմացական ընկալումը վերափոխելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկը ինքնուրույն, քննադատական մտածողության զարգացումն է: Քննադատական մտածողությունը հանդիսանում է մարդու իմացական ընկալումը ձևավորող կարևորագույն բաղադրիչ: Հարց է առաջանում արդյո՞ք դասավանդվող կրթական ծրագրերը զարգացնում են քննադատաբար մտածելու կարողություն, արդյո՞ք դասավարդման մեթոդը/դասավանդվող առարկաները ազդում են քննադատական մտածողության ձևավորման վրա, արդյո՞ք միջառարկայական դասընթացները նաստում են քննադատական մտածողության զարգացմանը: Արդյո՞ք քննադատական մտածողություն ունեցող աշակերտները առավել հակված են հակամարտությունների/հակասությունների կարգավորմանը: Պետք է կրթել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու ինչպես դպրոցական առարկաների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը կարևորվում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման տեսանկյունից: Նշենք նաև, որ այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը: Տարբեր հեղինակներ առաջ են քաշում քննադատական մտածողության տարբեր սահմանումներ: Ռոբերտ Յանգը նշում է, որ քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների (cognitive skills) և ռազմավարությունների

կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը: Ըստ նրա քննադատական մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է: Յանգը նաև նշում է, որ խնդրիների լուծման, հիմնավորված ենթադրությունների կառուցման, հավանականությունների հաշվարկման և որոշումների կայացման հիմքում պետք է ընկած լինի քննադատական մտածողությունը : Ըստ նրա, այդպիսի մտածողություն ունեցող անհատները վերոնշյալ հմտություններն օգտագործում են գիտակցաբար, այսինքն նախապես գնահատում են այն արդյունքի ազդեցությունը, որը ձեռք կբերվի մտածելու գործընթացի ավարտին: Բարձրագույն կրթության մասնագետ Սալի Գլենը նշում է, որ քննադատական մտածողությունը, որպես համակարգված կատեգորիա ձևավորվել է բժշկության բնագավառում: Ըստ նրա բժշկությունը մի բնագավառ է, որտեղ ցանկացած որոշում կարող է ճակատագրական լինել մարդու կյանքի համար: Ուստի նախքան որոշում ընդունելն անհրաժեշտ է գնահատել այդ որոշման ճիշտ կամ սխալ լինելը և հնարավոր ազդեցությունը: Ըստ Գլենի քննադատական մտածողությունը դա փիլիսոփայական կողմնորոշում է դեպի մտածողություն, ինչպես նաև իմացական գործընթաց, որին հատուկ է պատճառաբանված դատողությունը և ռեֆլեկտիվ մտածողությունը (reflective thinking) Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես «ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել»): Մեկ այլ աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը :Սակայն սա ամեննին չի նշանակում, որ խնդրի շուրջ քննադատաբար մտածելու արդյունքում կբացահայտվի ճշմարտությունը: Հետևաբար, ընկալումը, թե որն է ճշմարտություն, մեծապես կախված է մտածողի նախապաշարմունքից և հմտություններից: Կարելի է ասել, որ քննադատական մտածողությունն ունի երկու բաղկացուցիչ մաս. բաղկացուցիչներից մեկը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջություն, իսկ երկրորդը՝ այդ հմտություններն օգտագործելու սովորույթն է, որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը: Քննադատական մտածողության մեկ այլ ականավոր մասնագետ Էդուարդ Գլասերը հակիրճ սահմանել է, թե որն է քննադատաբար մտածելու կարողությունը: Ըստ նրա, այն ունի

երեք բաղկացուցիչ մաս. առաջինը դա անհատի կյանքի և գործունեության ընթացքում հանդիպած խնդիրները մտածված ձևով քննարկելու վարքագիծն է, երկրորդը՝ տրամաբանական հետաքննության (logical inquiry) և հիմնավորման/ պատճառաբանման (reasoning) մեթոդների իմացությունն է, և վերջապես երրորդը՝ վերոնշյալ մեթոդները կիրառելու հմտությունն է: Դեռևս 1954թ. Դրեսսելը և Մեյհյուն պարզել են, որ ընդհանուր զարգացման նպատակով առաջարկվող դասընթացներն առավել մեծ կարևորություն ունեն քննադատական մտածողության զարգացման տեսանկյունից : Հետագայում հիմք ընդունելով այս հետազոտությունը մշակվել և ստուգվել է այն վարկածը, որ միջառարկայական դասընթացներն առավել նպաստավոր են քննադատական մտածողության ձևավորման և զարգացման առումով: Ցույն իր հետազոտության արդյունքում գտել է, որ քննադատական մտածողության զարգացումը մեծապես կախված է նաև դասավանդման տեխնիկայից (instructional technique) : Զարմանալի չէ, որ ի տարբերություն անհատական աշխատանքների, թեստային քննությունները, որտեղ աշակերտը պետք է հարցի պատասխանն ընտրի նախանշված տարբերակների միջից, ամենևին չեն նպաստում քննադատական մտածողության զարգացմանը: Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ աշակերտը ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր համադասարանցիների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույնպես պետք է պատճառաբանված լինի: Քննադատական մտածողությանը հատուկ է երկու գործողություն՝ ենթադրությունները վերհանելը և վիճարկելը, ինչպես նաև այլընտրանքներն ուսումնասիրելը և պատկերացնելը: Գարիսոնն ուսումնասիրելով քննադատական մտածողության վերաբերյալ բազմաթիվ հեղինակների կարծիքները, նշել է, որ հաճախ հանդիպում են հեղինակներ, ովքեր մեր պատկերացրած քննադատական մտածողությանն անվանում են ռեֆլեկտիվ մտածողություն: Ըստ նրա առաջինն այն է, որ մարդու միտքը վազում է առաջ՝ գտնելու խնդրի հնարավոր լուծումներ, այնուհետև մտավոր հասունության մակարդակի է բերվում խնդրի՝ լուծում պահանջող բարդ հատվածները, այսինքն ձևակերպվում է այն հարցը,

որին պետք է պատասխան տալ: Երկրորդ փուլում մեկը մյուսի հետևից, որպես առաջնորդող գաղափար կամ հիպոթեզ քննարկվում կամ հաշվի են առնվում տարբեր առաջարկություններ, որոնք ուղղորդում են փաստերի հավաքման գործընթացը: Երրորդ և չորրորդ փուլերում փորձ է արվում զարգացնել և հիմնավորել հիմնական վարկածը և վերջում երևակայական գործողությամբ փորձարկել): Գարիսոնն իր հետազոտության մեջ մշակել է հինգ փուլից բաղկացած մի մոդել և ընդգծել է, որ քննադատաբար մտածելու պայմաններում անհատի մտածողությունն անցնում է բոլոր այդ փուլերով: Գարիսոնի հինգ փուլերն են – խնդրի նույնականացում, խնդրի սահմանում, ուսումնասիրում, կիրառում, և ինտեգրում: Առաջին փուլում մտածողությունը դեռ փորձում է վերհանել և ճանաչել խնդիրը, իսկ արդեն երկրորդ փուլում մտածողությունը դառնում է ուղղորդված և նպատակային: Ճանաչման փուլին հաջորդում է խնդրի գնահատումը և նրա հստակ բնույթի ընկալումը: Երկրորդ փուլում խնդիրը կարելի է սահմանել և՛ անհատապես, և՛ խմբային քննարկումների միջոցով: Սովորաբար խմբային քննարկումները նպաստում են, որ անհատն առավել հստակ հասկանա խնդիրը և մտածի այլընտրանքային հնարավոր մոտեցումների մասին: Ուսումնասիրման փուլի ժամանակ փորձ է արվում բացատրել և հիմնավորել խնդրի լուծման համար առաջ քաշվող հիմնական գաղափարները: Իրականում, այս փուլում, երբ խնդիրը ընկալում ենք որևէ համատեքստում և ունենք հիմնավորման համար բավարար փաստեր, բավականին դժվար է տարբերակել, թե որտեղից են ձևավորվում մեր մտքերն ու գաղափարները: Այս երրորդ փուլում արդեն ի հայտ են գալիս ինքնուրույն մտածելու և գնահատելու գլխավոր տարրերը: Չորրորդ փուլում մտածողությունը արստրակցիայի միջոցով փորձում է հասկանալ և գուցե գնահատել խնդրի լուծման կիրառելիությունը, իսկ հինգերորդ փուլում լուծումը փորձարկվում է և դրանով վերադարձ է կատարվում դեպի իրականություն: Քննադատական մտածողությունն ունենալու համար անհրաժեշտ է խոր գիտելիք քննարկվող առանկայի վերաբերյալ, ուստի մի շարք վերլուծաբաններ պնդում են, որ աշակերտի մոտ քննադատական մտածողության դրսևորումը մեծապես կախված է քննարկվող խնդրի բովանդակությունից. եթե աշակերտը ծանոթ չէ թեմային, ապա սխալ կլինի ակնկալել նրանից նման մտածողության դրսևորում: Գարիսոնը խիստ կարևորում է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Նա նշում է, որ ուսուցիչը պարտավոր է աշակերտին քննարկումների միջոցով դրդել վիճարկելու տարբեր գաղափարներ, ենթադրություններ, տեսություններ, նորմեր և կանոններ,

քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստաձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն : Ուստի պատահական չէ, որ ուսուցչի և աշակերտի միջև երկխոսության և քննարկման ծավալումը քննադատական մտածողության ձևավորման և զարգացման թիվ մեկ գրավականն է: Օրինակ, կան մշակույթներ, որտեղ ուսուցիչն ուղղորդում է աշակերտին խոր գիտելիքների ձեռքբերման գործում և չի մղում նրան կրիառել այդ գիտելիքը, իսկ արևմտյան մշակույթն առավել հակված է քաջալերել աշակերտին առավելապես շատ ժամանակ հատկացնել ինքնուրույն աշխատանքի իրականացմանը : Հարկ է նշել, որ քննադատական մտածողության շատ մասնագետներ վիճում են այս հարցի շուրջ, և չկա մեկ ընդհանուր տեսակետ, սակայն հստակ է, որ մեկ առարկայի շրջանակներում զարգացրած հմտությունների խումբը բավարար չէ այլ խնդիրներ քննարկելիս քննադատական մտածողություն դրսևորելու առումով: Կարելի է պնդել նաև այն, որ քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունները հնարավոր չէ կիրառել առանց խնդրո առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքի: Ուստի քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի և՛ առարկայական ծրագրի, և՛ ուսումնական պլանի զարգացման հիմքում:

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՄԻՋՈՑՆԵՐ**

Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց են տալիս, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Մակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ: Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և կանխորոշում են ուսումնառության նպատակները, հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման, նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը, նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով, ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման այլընտրանքային ուղիները տեսնելու կարողությունը:

Սուխումի ինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով նաև դրական, նաև բացասական վերաբերմունք: Քննադատական մտածողությունը կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը: Նախևառաջ հետաքրքիր է այն հարցը, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Իսկ կան արդյոք ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել քննադատական մտածողությունը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ գիտելիքները, որոնց ստացման ժամանակ տրվում են մտածողության ընդհանուր կանոններ, կարող են փոխադրվել նաև գործունեության այլ ոլորտներ:

Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման : Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք

պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ : Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս էք գնահատում....: Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը: Ճանաչողության գործընթացում կարևոր է ֆիքսել այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել, բայց պետք նաև ֆիքսել այն, ինչը մենք դեռևս չգիտենք և ենթակա է պարզվելու: Այդպիսիք են հենց հարցերը: Հարցի կառուցվածքը հասկանալու համար նախ պետք է առանձնացնել այն, ինչ մենք արդեն գիտենք: Մեր իմացածի հիման վրա էլ արդեն կարելի է ձևակերպել հարցը: Հարցը որպես ճանաչողության ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ որ հայտնի փաստի վրա: Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

Յուրաքանչյուր դասընթաց որևէ բնագավառի սահմաններում աշակերտին տրամադրում է գիտելիք, որն իր հերթին հիմք է այլ գիտելիքի ձևավորման համար: Ուստի ուսուցիչը պետք է հստակեցնի, թե ինչ վարքագիծ աշակերտը կարող է դրսևորել դասընթացի ավարտին:

Որպեսզի քննադատական մտածողությունը մաս կազմի այդ վարքագծի, պետք է ուսումնառության արդյունքները սահմանել Բլումի տաքսոնոմիայի մակարդակներից մեկի կամ մի քանիսի լեզվով: Բլումի տաքսոնոմիայի

մակարդակներից յուրաքանչյուրին հատուկ է բայերով արտահայտված գործողությունների կամ վարքագծի խումբ, և մտածված գրված ուսումնառության արդյունքները հնարավորություն կտան ուսուցին դասընթացի ավարտին աշակերտից ակնկալել որևէ մակարդակին հատուկ վարքագիծ: Օրինակ, եթե դասընթացը, ի թիվս այլ հմտությունների, միտված է աշակերտի մոտ զարգացնել վերլուծության հմտությունը, ապա ուսումնառության արդյունքում աշակերտից կպահանջվի քննարկել, դասակարգել, տարբերակել, վերլուծել, պարզաբանել, հիմնավորել և այլն: Մինթեզի պարագայում, աշակերտից կակնկալվի միավորել, կառուցել, ստեղծել, ենթադրել, իսկ օրինակ գնահատման մակարդակում աշակերտը պետք է գնահատի, քննադատի, առաջարկի, կանխատեսի և այլն: Այսինքն, կախված դասընթացի նպատակից, ուսումնառության արդյունքները կարող են գրված լինել վերոնշյալ բայերից մեկով, որոնք իրենց հերթին ենթադրում են որոշակի վարքագծի դրսևորում: Նշենք նաև, որ մակարդակներին ներհատուկ բայերն ավելի շատ են, քան այստեղ ներկայացված օրինակները: Ուսումնառության արդյունքներին հասնելու տեսանկյունից շատ կարևոր է դասի պլան կազմելը: Առաջարկվող շրջանակային մոդելի երկրորդ փուլը ենթադրում է դասավանդում՝ հարցեր տալու միջոցով: Ինչպես նշեցինք առաջին քայլի քննարկման ժամանակ, աշակերտներին հարցեր տալը հանդիսանում է դասավանդման և ուսումնառության կենսական կարևորություն ունեցող մասը: Հարցադրումներն օգնում են ուսուցչին ստուգել, թե որքանով են աշակերտները նյութը յուրացրել, հաստատել նրանց կողմից ձեռք բերված գիտելիքը և, որն ամենակարևորն է, քննարկումների միջոցով խթանել նոր մտքերի, հասկացությունների ձևավորումն ու զարգացումը: Ուսուցիչը կարող է հանդես գալ նոր մարտահրավերներ նետողի դերում, և այս պարագայում աշակերտը ստիպված է լինում հստակեցնել իր դիրքորոշումը և պաշտպանել այն: Հարցադրումներ ներկայացնելու տեխնիկան օգտագործվում է աշակերտի մտածելու կարողությունը զարգացնելու համար: Հարցադրումները կարող են լինել պարզ և միանշանակ (համամետ), և կարող են լինել շատ բազմանշանակ հարցեր (տարամետ), որոնք չունեն մեկ հստակ ճիշտ կամ սխալ պատասխան: Մոդելի երրորդ փուլը ենթադրում է նախքան գնահատելը աշակերտին տալ սովորածը կիրառելու հնարավորություն: Բազմիցս նշվել է, որ ժամանակակից կրթական համակարգում դասավանդումը պետք է իրականացվի ակտիվ ուսումնառության միջոցով: Տրամաբանական է, որ աշակերտն առավել լավ է յուրացնում և երկար է պահում այն գիտելիքը, որի շուրջ իր

տեսակետն ու կարծիքն է արտահայտել: Երբ մշակվում է առարկայական ծրագիրը, իդեալական կլիներ նախապես մտածել ակտիվ ուսումնառությունն ապահովող այն տեխնոլոգիաների մասին, որոնք հնարավորություն կտային աշակերտին ինքնուրույն հավաքել ինֆորմացիա և ձևավորել սեփական մտքերը, ինքնուրույն մոդելավորելու և դիտարկելու փորձ ձեռք բերել, ինչպես նաև հնարավորություն ընձեռել ձեռք բերելու ռեֆլեկտիվ գործողություն իրականացնելու անմիջական փորձ: Առաջարկվող մոդելի չորրորդ փուլը ենթադրում է վերանայում, բարելավում և կատարելագործում: Ցանկացած առարկայական ծրագիր, որքան էլ լավ մտածված լինի, ունի որոշ թերություններ, որոնք երևան են գալիս դասավանդման ընթացքում:

Այս մեթոդների կիրառումը հնարավորություն է ընձեռում ուսուցչին անմիջապես աշակերտից հասկանել, թե դասընթացի որ հատվածներն են հաջողվել, և որոնք ունեն բարելավման անհրաժեշտություն: Առաջարկվող մոդելի եզրափակիչ փուլը ենթադրում է հետադարձ կապի տրամադրում և ուսումնառության գնահատում: Իրականում, հետադարձ կապի ապահովման նպատակը աշակերտի ուսումնառության որակի բարելավումն է: Գնահատումը հնարավորություն է տալիս հասկանալու, թե որքանով են ուսումնառության արդյունքները աշակերտի կողմից ձեռք բերվել: Այդ արդյունքի վերլուծությունը կօգնի նաև հասկանալ դասընթացի թույլ և ուժեղ կողմերը, և ուսուցչի դիտորդական գրառումների և աշակերտների հարցումների հետ համատեղ, բավարար ինֆորմացիա կտա հիմնավորելու բարելավման և կատարելագործման նպատակով ներկայացվող առաջարկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, պատմության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել քննադատական մտածողության հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել: Եկանք այն եզրահանգման որ կրթական համակարգը այսօր չի նպաստում քննադատական մտածողության ձևավորմանը և զարգացմանը, որը հանդիսանում է բարձրագույն կրթության առաջնահերթ նպատակներից մեկը: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ համապատասխան կրթական միջավայրի բացակայության պայմաններում աշակերտները հիմնականում չեն տիրապետում քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտություններին: ՀՀ կրթական համակարգը իրականում նպաստում է գիտելիքի ձևավորմանը, ինչն անչափ կարևոր է, սակայն մյուս կարևոր բաղկացուցիչը այդ գիտելիքի կիրառումն է, որի համար անհրաժեշտ են համապատասխան հմտություններ: Մեր օրերում հավասար կարևորություն ունեն գիտելիքը, հմտությունները և կարողությունները՝ քննադատական մտածողության ձևավորման և զարգացման խնդիրը խիստ բազմաշերտ է: Այստեղ կարևոր են առարկայական ծրագրերը, դասավանդման մեթոդները, ուսուցչի ուղղորդիչ դերը, գրականության մատչելիությունը, դասընթացի տևողությունը, և անկասկած շատ

կարևոր է, թե որքանով է ուսուցիչը անձամբ տիրապետում քննադատական մտածողությանը: Ամփոփելով նշենք, որ ընդհանրապես, կրթության բնագավառը լինելով ռազմավարական ոլորտ, ամբողջ աշխարհում դժվարությամբ է ենթարկվում փոփոխությունների, քանզի համակարգի ցնցումները կարող են շատ վտանգավոր և վնասակար լինել, և արդյունքում բարոփոխմանն ուղղված բոլոր ջանքերը հոդս կցնդեն: ՀՀ կրթական համակարգում այսօր փորձ է արվում հեղափոխության եղանակով ներդնել մի համակարգ, որին եվրոպական պետությունների կրթական համակարգերը հասել են էվոլյուցիայի արդյունքում: Միաժամանակ մի քանի ուղղություններով բարեփոխումների իրականացումը բերում է նրան, որ բարեփոխման օբյեկտը չի հասցնում ընկալել իրենից պահանջվողը և մերժողական վարքագիծ է դրսևորում: Շփոթության և մերժողականության համար հիմք է նաև համապատասխան ինֆորմացիայի բացակայությունը. ցանկացած նորարարական մոտեցում պետք է նախապես ներկայացնել անմիջական իրագործողներին, քննարկել նրանց հետ և հետո միայն ներդնել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ա., Մանկավարժություն, Ե., 2004:
2. Ամիրջանյան Յու. Ա., Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրեցենտի ակտիվացման միջոցներ, Ե. 19756.
3. Ղևոնդյան Հ.Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Ե., 2001:
4. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչներ, Ե., 2004:
5. Մանուկյան Ս.Պ. Մանկավարժագիտություն: Նոր դասընթաց. Երևան, «Զանգակ» 2002:
6. Аверьянов Л. Я. Социология: искусство задавать вопросы. Издание 2-е, переработанное и дополненное. Москва. Изд.-во “Москва” 998. 195 с.
7. Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”. 1982. 191 с. 3.
8. Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002.
9. Халперн Д.Ф. Психология критического мышления. СанктПетербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с.